ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիս 1-ին, ուրբաթ.— *Առավոտյան ժամը 12-ին Մայր Տաճար այցելեց աշխարհի շախմատի կրկնակի ախոյան Տիգրան Պետրոսյանը իր հարգելի տիկնոջ հետ։ Տ. Պետրոսյանին ընկերակցում էր ճարտարապետ Ռազմիկ Ալավերդյանը։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը Վեհարանում սիրով ընդունեց այցելությունը Տ. Պետրոսյանի և նրան ուղեկցող անձանց։*

Վեհափառ Հայրապետի և Տ. Պետրոսյանի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց։

***

Հուլիս 1-ին, ուրբաթ.— *Կեսօրից հետո, ժամը 3-ին, Մայր Տաճար այցելեց հյուրաբար Հայաստանում գտնվող Չեխոսլովակիայի կրոնից մինիստրը։*

Հարգելի հյուրին ընկերակցում էին Մոսկվայից ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Մակարցևը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Մեծահարգ հյուրը և նրան ընկերակցող անձինք Մայր Տաճարում և եկեղեցական զանձատանը լինելուց հետո այցելեցին Վեհափառ Հայրապետին Վեհարանում, ուր տեղի ունեցավ սիրալիր ջերմ զրույց։

Ժամը 4-ին հարգելի հյուրերի պատվին Վեհարանում տրվեց ճաշկերույթ, որն անցավ բարեկամական սիրալիր մթնոլորտում։ Հյուրերը հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից լավագույն տպավորություններով։

***

Հուլիս 3-ին, կիրակի.— *Մայր Տաճարում պատարագեց հոդ. Տ. Ներսես ծ. վրդ. Պոգոսյանը։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Հուլիս 4-ին, երկուշաբթի.— *Ժամը 4-ին Վեհարանում Վեհափառ Հայրապետի նախագահության տակ գումարվեց Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի հերթական նիստը։*

Ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Վեհարանում իրեն սեղանակից դարձնել ճարտարապետական հանձնախմբի պատվական անդամներին։

Ճաշկերույթին ներկա էին նաև վերջերս սփյուռքից մայր հայրենիք ժամանած տեր և տիկին Բեգլար և Մարիցա Նավասարդյանները։

***

Հուլիս 10-ին, կիրակի.— *Մայր Տաճարում պատարագեց հոդ. Տ. Արսեն վրդ. Բերբերյանը։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Հուլիս 10-ին, կիրակի.— *Երևանի Ս. Սարգիս եկեղեցում Արարատյան թեմի Առաջնորդական Փոխանորդ գեր. Տ. Վահան եպսկ. Տերյանը ձեռնադրեց երկու նորընծա քահանաների, որոնցից մեկը արժ. Տ. Հակոբ քահ. Գեբենյանը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նշանակվեց քահանայագործելու Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում, իսկ մյուսը արժ. Տ. Եպիշե քահ. Արրահամյանը՝ Բշնի գյուղաքաղաքում։*

***

Հուլիս 17-ին, կիրակի.— *Վարդավառ. Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր ս. ղատարագ. պատարագեց և քարոզեց վրահայոց առաջնորդ գեր. Տ. Կոմիտաս եպսկ. Ստեփանյանը «Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զԱստուածային քո*

զորութիւնդ. զքեզ փառավորեմ իմանալի լոյս» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հուլիս 18-ին, երկուշաբթի.— Յիշատակ մեռելոց. Մայր տաճարում պատարագեց արժ. Տ. Նշան քահ. Բեյլերյանը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Վասն համօրէն ննջեցելոց»։

***

Հուլիս 20-ին, չորեքշաբթի.— Վեհափառ Հայրապետը մեկ ամսվա արձակուրդով մեկնեց Չեխոսլովակիա «Կարլովի Վարի»-ի հանգստարանը։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր հոգ. Տ. Ներսես ծ. վրդ. Պողոսպալյանը։

***

Հուլիս 24-ին, կիրակի.— Մայր Տաճարում պատարագեց հոգ. Տ. Գրիգոր վրդ. Եղիայանը։

***

Հուլիս 31-ին, կիրակի.— Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Հակոբ քահ. Հակոբյանը։

ՀԱՆԳՈՒՅՑ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ
(1882—1966)

Վերջերս երկարատև հիվանդությունից հետո ի տեր հանգյավ արժ. Տ. Կարապետ քահ. Հակոբյանը 84 տարեկան հասակում։

Հանգուցյալը ծնվել էր 1882 թ. Ռոստովի շրջանի Մյասնիկյանի մարդի Նիովիթա գյուղում։ Սովորել է տեղի ծխական դպրոցում և այնուհետև շուրջ 20 տարի պաշտոնավարել է տեղի հայոց եկեղեցում։ 1955 թվին ձեռնադրվել է քահանա և պաշտոնավարել Ռոստովի շրջանի Թոփրի գյուղի հայոց Ս. Փրկիչ եկեղեցում։

Հանգուցյալի վերջին օծումը կատարել է արժ. Տ. Մկրտիչ ավագ քահ. Ջորչոփյանը, իսկ դամբանականը խոսել է արժ. Տ. Հակոբ քահ. Տեր-Հակոբյանը։

Հանգիստ իր ոսկորներին։



ՂԱԼԱԹԻԱՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ